«Ղարաբաղյան կարգավորման ձգձգումը անցանկալի է»

ՌԴ նախկին փոխարտգործնախարար Անատոլի Ադամիշինը Հարվարդի համալսարանում «Կասպյան ուսումնասիրությունների ծրագիր» կոչվող ուսումնական նախագծի շրջանակներում զեկույց է կարդացել «ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունները Կասպյան տարածաշրջանում» թեմայով: Ըստ ANS գործակալության, նա մասնավորապես նշել է, որ «թեև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում առաջընթաց չկա, սակայն առանց Ռուսաստանի, իրադրությունն առավել վատթար կլիներ: «Ի վերջո 6 տարիների ընթացքում պատերազմական գործողություններ չեն եղել»,- ասել է նա: Ըստ նրա, շուրջ 1 տարի առաջ իրավիճակը մոտ էր հանգուցալուծման, սակայն դրան խանգարեցին Հայաստանի խորհրդարանի ողբերգական դեպքերը: Ադամիշինը նաեւ նշել է, որ ՌԴ նոր նախագահ Պուտինը նույնպես կարող է նպաստել հակամարտության կարգավորմանը: «Վտանգ կա, որ շարունակական ձգձգումը կարող է հանգեցնել կողմերի դիրքորոշումների արմատականացմանը: Մենք արագացման կողմնակից ենք: Ռուսաստանը սատարում է խաղաղ կարգավորման գործընթացը»,- նշել է նա: Այնուհետեւ ելույթ է ունեցել Մինսկի խմբի ամերիկյան կողմի համանախագահ Քերի Քավանոն: Նշելով, որ չնայած հրադադարի ռեժիմին, շուրջ 100 մարդ զոհ է գնացել ականային պայթյուններին եւ փոխհրաձգություններին, նա հայտարարել է, որ «Միացյալ Նահանգները նոր եւ առավել համարձակ մոտեցումներ է փնտրում հակամարտության կարգավորման համար»: Ըստ Քավանոյի, ԵԱՀԿ Մինսկի խմբի հաջորդ հանդիպումը տեղի կունենա Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում հաջորդ շաբաթ:

ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ